ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010 ք. Երևան, Վ.Սարգսյան փ. 5
Էլ. փոստ info@prosecutor.am

N 44/7-20
02. 06. 2020թ.

«Ասմիդա» ՍՊԸ
տնօրեն Ռ. Ասծատուրյանին

Հարգելի՛ պարոն Ասծատուրյան,

Դուք՝ տեղյակ լինելով, որ «Ասմիդա» ՍՊԸ-ն 2019 թվականի նոյեմբերի 22-ից մինչև 2021 թվականի նոյեմբերի 22-ը ընդգրկվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում, այնուամենայնիվ 15.04.2020 թվականին մասնակցության հայտ եք ներկայացրել ՀՀ դատախազության (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար տնտեսական, սանիտարական և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/3» ծածկագրով հայտարարված գնանշման հարցում ընթացակարգին (այսուհետ՝ ընթացակարգ):

Վերոնշյալ փաստը չի նկատվել գնահատող հանձնաժողովի կողմից և ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով «Ասմիդա» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից: 2020 թվականի մայիսի 7-ին ՀՀ դատախազության և «Ասմիդա» ՍՊԸ-ի միջև «ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/3-3» ծածկագրով կնքվել է 771,120 ՀՀ դրամի պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Հետագայում ուսումնասիրվել են բոլոր հիմքերը և պարզվել է, որ «Ասմիդա» ՍՊԸ-ն համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, չուներ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք և վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ ՀՀ դատախազության և «Ասմիդա» ՍՊԸ-ի միջև 07.05.2020թ. կնքված ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/3-3 ծածկագրով պայմանագիրը ենթակա է միակողմանի լուծման Պատվիրատուի կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետը:

Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակելու հաջորդող օրվանից:

Հարգանքով՝

Ն. Նավասարդյան